

ՀՈՒՇԱԹԵՐԹԻԿ
ԾՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ




Ի՞ՆՉ Է ՖԻՄՈՉԸ

Ծայրային թիպն առնանդամի գլխիկի շրջանի մաշկի ավելցուկն է, որի դերը առնանդամի գլխիկին ու միզուկի արտաքին բացվածքը պաշտպանելն է:

Ֆիմոզն առնանդամի գլխիկի մերկացման անհնարինությունն է (ծայրային թիպը հետ չի գնում և գլխիկը չի բացվում):

Ֆիզիոլոգիական ֆիմոզը դիտվում է գրեթե բոլոր նորածին տղա երեխաների մոտ: Ծնվելուց հետո առնանդամի գլխիկի և մաշկի միջև առկա են նուրբ կպումներ, որոնք ժամանակի ընթացքում աստիճանաբար անցնում են և գլխիկը սկսում է մերկանալ: Ֆիզիոլոգիական ֆիմոզը նորմալ երևույթ է և չի պահանջում որևէ բուժում կամ միջամտություն:



Ֆիզիոլոգիական ֆիմոզ

- 1. Ֆիզիոլոգիական ֆիմոզ – գլխիկի և թիպի միջև առկա են կպումներ:
- 2. Տարիքի հետ կպումներն աստիճանաբար անցնում են:
- 3. Ֆիզիոլոգիական ֆիմոզն ինքնուրույն անցնում է և գլխիկը սկսում է ամբողջությամբ բացվել:

Երբեմն առնանդամի գլխիկի շրջանում մաշկի տակից սպիտակադեղնավուն գոյացություն կարող է երևալ: Դա **սմեգմայի կուտակում է**: Այն անցավ է, անվտանգ, որևէ միջամտություն չի պահանջում:

Հազվադեպ կուտակված սմեգմայի հատվածում կարող է դիտվել ինֆեկցում և բորբոքում, այս դեպքում դիտվում է նաև կարմրածություն, այտուց, ցավ և անհրաժեշտ է դիմել բժշկի:



Սմեգմայի կուտակում

Սպիական ֆիմոզի դեպքում ծայրային թիպի ծայրին առկա է օղակաձև սպիտակավուն նեղացած հատված, միզուկի բացվածքը նեղացած է: Դրա պատճառով գլխիկի մերկացումը դառնում է անհնար: Արտահայտված դեպքերում կարող է միզարձակության խանգարում առաջանալ:



Սպիական ֆիմոզ

Սպիական ֆիմոզի առաջացման պատճառներ են առնանդամի գլխիկի և ծայրային թիպի հաճախակի կրկնվող բորբոքումները (բալանոպոստիտները), ծայրային թիպի կոպիտ հետ քաշելու ու բացելու փորձերը ֆիզիոլոգիական ֆիմոզի ժամանակ: Սպիական ֆիմոզը բուժում է պահանջում:

ԾԱՅՐԱՅԻՆ ԹԼԻՊԻ ՃԻՇՏ ԽՆԱՄՔԸ

- Նորածին տղաների առնանդամի թիպի շրջանի հիգիենան նույնն է, ինչ մարմնի այլ հատվածներինը: Այդ շրջանը պետք է լվացվի յուրաքանչյուր լողանքի ժամանակ: Այդտեղ ևս կարելի է մանկական օճառ օգտագործել:
- Զանի դեռ ծայրային թիպն ինքնուրույն չի սկսել հետ գնալ և գլխիկը չի բացվում, «դրա տակը» մաքրելու և լվանալու անհրաժեշտություն չկա:
- Անհրաժեշտ է հաճախակի փոխել երեխայի տակդիրը՝ մաշկի գրգռումից և բորբոքումից խուսափելու համար:
- Զի կարելի կոպիտ ձևով և ուժ գործադրելով փորձել հետ քաշել թիպը, «բացել» ֆիզիոլոգիական ֆիմոզը: Սա կբերի այդ հատվածի մաշկի վնասման և հետագայում սպիական ֆիմոզի առաջացման:
- Երբ տարիքի հետ ծայրային թիպը սկսում է աստիճանաբար հետ գնալ և գլխիկը մերկանում է, անհրաժեշտ է լողանքի ժամանակ զգուշությամբ հետ քաշել այն, լվանալ գլխիկի շրջանը, ապա անպայման նորից փակել:
- Ավելի մեծ տարիքի տղա երեխային անհրաժեշտ է սովորեցնել այս ամենը, որպեսզի երեխան ինքնուրույն ճիշտ կարողանա պահպանել այս հատվածի հիգիենան:



Ի՞ՆՉ ԱՆԵԼ, ԵՐԲ ԵՐԵԽԱՆ ՖԻՄՈՉ ՈՒՆԻ

Ֆիզիոլոգիական ֆիմոզը չեն բուժում, այն դիտվում է գրեթե բոլոր նորածին տղա երեխաների մոտ և տարիքի հետ ինքնուրույն անցնում է:

Սպիական ֆիմոզի դեպքում բժիշկը, իրավիճակից կախված, կարող է դեղորայքային կամ վիրահատական բուժում առաջարկել:

Ե՞ՐԲ ԴԻՄԵԼ ԲԺՇԿԻ

Սպիական ֆիմոզի կասկածի դեպքում անպայման դիմեք բժշկի: Միզարձակության սուր խանգարումը անհետաձգելի իրավիճակ է՝ **անհապաղ** դիմեք բժշկի:

